



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ք.Երևան, Զաքյան 7-3

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2023թ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀՈՍՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՎՈՐ ՓՈՒԼԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՓՈՒԼԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի (**այսուհետ՝ ՀՀ փաստաբանական ակադեմիա**) ընդունելության հանձնաժողովը (**այսուհետ՝ Հանձնաժողով**), մասնակցությամբ Հանձնաժողովի նախագահ Արա Զոհրաբյանի, անդամներ՝ Մանե Կարապետյանի, Մարինե Տարմանյանի, Ռոման Ահարոնյանի և Արաքս Վարդանյանի (քարտուղար),

ղեկավարվելով ՀՀ փաստաբանական ակադեմիայի կանոնադրության թիվ մեկ հավելվածի՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա ընդունվելու կարգի 4-րդ կետի 1-ին ենթակետի, ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի 30.11.2022թ. թիվ 13/6-Լ որոշմամբ հաստատված Ընդունելության քննությունների կազմակերպման և անցկացման կարգի 8-րդ կետի 10-րդ ենթակետով, ինչպես նաև ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտորի 01.12.2022թ. թիվ 130-Լ որոշմամբ հաստատված Ընդունելության հանձնաժողովի գործունեության կարգի 12-րդ կետի 1-ին ենթակետով,

ուսումնասիրելով սույն որոշման հավելվածում նշված դիմորդների կողմից ներկայացված դիմումները և կցված նյութերը,
միաձայն՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված դիմորդներին մասնակցել ՀՀ փաստաբանական ակադեմիայի՝ 2023թ. գարնանային հոսքի ընդունելության գրավոր քննությանը՝ սահմանելով յուրաքանչյուր դիմորդի քննության օրը և ժամը:

11 հունվարի 2023թ.
թիվ 01-Ա

2. Սահմանել ՀՀ փաստաբանական ակադեմիայի՝ 2023թ. գարնանային հոսքի ընդունելության գրավոր քննության անցկացման վայրը՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Զաքյան 7-3 (ՀՀ փաստաբանական ակադեմիայի վարչական շենք, 3-րդ հարկ) հասցեն:
3. Սահմանել, որ սույն որոշման հավելվածում նշված ընդունելության քննության գրանցման օրը և ժամին չներկայացած (ներառյալ ուշ ներկայացած) դիմորդները համարվելու են ընդունելության քննությանը չմասնակցած:
4. Հանձնաժողովի քարտուղարին՝
 - 1) սույն որոշումը հրապարակել ՀՀ փաստաբանական ակադեմիայի կայքում առանց հավելվածի.
 - 2) հավելվածում նշված դիմորդներին ուղարկել հավելվածի քաղվածքը իրենց վերաբերող մասով:

Հանձնաժողովի նախագահ՝

Արա Զոհրաբյան

11 հունվարի 2023թ.

թիվ 01-Ա

ք.Երևան